

բոլոր իշխանութիւնն անոնց ձեռքն ան-
ցաւ: Այս կերպով խաղիւք՝ որ ինչուան
կասպից հիւսիսային և արևելեան ա-
փունքը տարածուելով՝ իրենց անունը
տուին այն ծովուն (խաղրաց ճով, ինչ-
պէս կոչկասու հիւսիսակողմեան եր-
կրին այլ խաղրաց դաշտ), Բ-Ժ դարուց
մէջ՝ ամփոփուեցան վոլկայի վարի կող-
մերը, և առջի վայրենութիւնն թող-
լով՝ բաւական քաղաքականութեան
կարգ և ձև առին. այս բանիս մէկ պատ-
ճառն էր Բիւզանդեան կայսերաց հետ
երբեմն դաշնակցիլն՝ թշնամութեամբ
ընդ Արաբացիս, թէ և ոմանք այլ թ դա-
րուն սկիզբները (820) մահմէտական
եղան՝ որ Արաբացւոց հաճոյ ըլլան և
չնեղին ՚ի թուրքաց: Բայց աւելի շա-
տերն, ըստ աւանդութեան, այն կող-
մերը հին Հրէից գաղթականներէն կամ
ուրիշ պատճառաւ՝ հրէական կրօնից
հետեւեցան. մինչև պատմեն ճանապարհ
հորդք թէ Թ-Ժ դարուց մէջ անոնց թա-
ղաւորներն Հրեայ էին. և շատ նշանա-
ւոր է առ բանասէրս՝ Ժ դարուն կիսուն
մօտ դէպք մը (եթէ իրաւ է). Անտալու-
սիոյ (՚ի Սպանիա) Արաբացի թաղա-
ւորի մը հրեայ պաշտօնեայն (Ռաֆի խա-
տայի) թղթով հարցուց և տեղեկու-
թիւն ուզեց խաղրաց թաղաւորէն ի-
րենց կրօնից և ծագման վրայօք. նա

այլ պատասխանեց և իմացուց՝ որ խա-
ղիւք են ՚ի խոջարայ յեօթներորդ որ-
դոյ թորգոմայ, որոց առաջինն այլ ա-
նուանէ Ալիյոյր՝ որ է մեր Հայկն, Ը՞
ճանուր, Թ՞, Պուշդար, Ժ՞, Սաւիր (Սա-
բիր) և այլն. և թէ վոլկայէն գրեթէ
ինչուան Դանուր կու տիրէին. իր նա-
խորդաց մէկն աստուածային յայտնու-
թեամբ ընդուներ էր հրէութիւնը, և
ինքն (գրողն) Յովսէփ՝ տասնևչորրորդ
հրեայ թագաւորն էր խաղրաց. ուրիշ
կարևոր դիտելիք այլ կ'աւանդէ, զոր
հոս յիշել աւելորդ սեպեմ, Հայկակ:
Բիւզանդիոյ և Ռուսաց պատմութեան
մէջ, որոց երկուքն այլ սահմանակցու-
թեամբ գործեր ունեցան ասոնց հետ,
ինչուան ԺԱ դարուն առաջին քառորդն
յիշուին խաղիւք, և ըստ ոմանց՝ այն ա-
տեն (կամ յամին 1046) Ռուսք բոլորո-
վինսուածեցին զխաղիւս: Ստուգիւ՝ մէկ
կողմէն Ռուսք երբեմն նեղեալք ՚ի խաղ-
րաց՝ կամաց կամաց զօրացան նաև տի-
րացան անոնց սահմանաց. մէկայլ կող-
մէն բուն տիրողք և անյիշատակ ընողք,
և Սկիւթացի ազգաց գլխաւորութիւնը
առնողք՝ յետ այնքան նախայիշեալ հը-
զօր ու նետող և ասպատակող ժողովրդ-
ոց՝ եղան տոհմի թուրքաց:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Շարունակի

ՀԻՆ ՔՆԱՐ

Ի Սուրբ Հոգին.

Այսօր պանծալի երգով գոչեմք եւ մէք

Ի ձայն քաղցրութեան նրւագ.

Նախնեացըն մեծաց առաքելոց գընդին

Նըմանող լիցուք յորդորական ըղձիւ:

Դասուց երկնայնոց հանդիսակից դուով

Վարուք մաքրութեամբ հանդիպեսցուք տօնիս:

Բոպէից կազմիչ Հոգին Աստուած այսօր

Ի ձայն սաստկութեան հոգմոյ հընչեաց յաշխարհս.

Ի հրաձև տեսակ անուշահոտ բուրմամբ

Լըցան արարածք եւ սրբեցան վարուք:

Ահիւ տաղնապեալ այլալեզու Հրէիցն ,
Ճեպով ընթացեալ ի վերնատունըն սուրբ ,
Սարսեալ դողային յօտարաձայն լեզուացն ,
Անտեղեակք եղեալ զմարդարէին առածն :
Ի Հոգւոյն շարժեալ վէմն հաւատոյ այսօր ,
Տարածեաց զուռկանն աստուածային բանին .
Երբակի անձանց երիս հազարս որսաց :
Երկիրս նոր երկին զարդարեցաւ այսօր
Առ մեզ գալըստեամբ ամենիմաստ Հոգւոյն ,
Աստուածպետական նոր նորոգեաց զեղեալքս :
Բարունն ի բարձանց մինն ի յերից Հոգին ,
Յայտնեաց ըզխորհուրդս Հօր եւ Որդւոյ մարդկան ,
Մաքրեաց զարարածս ի դիւամուլ զոհիցն :
Գոչմամբ ձայնակից ընտրեալ հօտին այսօր
Լիցուք խըմբակից եկեղեցւոյ մանկունք ,
Զփառս ի վեր երգել Երրորդութեանն միշտ :

Մեծապայծառ ձայնիւ գոչեն եկեղեցիք ուղղափառաց
Ի նուազ պարու յաւուր տօնի իջման Հոգւոյն ,
Եկն ի բարձանց իշխանութեամբ ապէնիաղն ,
Հոլաթեւեալ աղանակերպ՝ ի ձայն հրնչման :
Ղամպարափայլ ի ձեւ լուսոյ բոցատեսակ
Յօտար լեզուս տայր բարբառել ընտրեալ հօտին :
Ակումբ առեալ ակն ունէին Հօրն աւետեաց .
Համագումար ի վերնատունն յերեք ժամուն
Պաղատէին հառաչանօք մեծ աղերսիւ ,
Ըստ խոստըմանն ըզբարեխօսըն խընդրէին :
Ահա եհաս ի դուրս սիրոյ մըխիթարիչն ,
Փարատեցոյց ըզտարակոյսն ի տըրտմեւոցն :
Բամից ստեղծողն որ ի սկզբանն գըրգայր ի ջուրսն ,
Գայ յաւազանն ժառանգ առնել Երրորդութեանն :
Տուրք պարգեւաց մարդկան շնորհեաց զաւետարանն ,
Իմաստնացոյց ըզթագաւորսն որ ի Սաղիմ :
Իսկ մեք մանկունք եկեղեցւոյ Հայաստանեայց
Ըզփառս հանցուք Երրորդութեանն այժմ եւ յաւէտ :

Նորոգող տիեզերաց Հոգիդ Աստուած
Այսօր իջեալ խոնարհութեամբ ի վերնատունն ,

Որում՝ սպասեալ մետասանիցն տրտմելոյ
Ակն ունելով սուրբ աւետեացդ Հօր ի բարձանց ,
Իիւծեալ բնութեանս վերնորոգող կենդանարար ,
Եւ անըսպառ շնորհաց բաշխող Տէր բարերար :
Առաքեցար լոյսդ ի լուսոյ Հօրէ անճառ .
Լուսաւորել զխաւար մեղաց աստուածաբար .
Սէրդ սիրով երեւեցար քոյ ընտրելոցն ,
Հաստատելով ի սէր բանին մինչ ի վախճան .
Տէրդ տուող խաղաղութեան տիեզերաց
Տըւեալ նոցա զորդեգրութեան Հոգիդ շնորհաց :
Ի քէն հայցեմք Աստուած եւ Տէր Հոգիդ անմահ ,
Ի մեզ խնայեա յօրն ահագին եւ յանաչառ :
Երկնայնոց զօրաց խրմբիցն աղաչանօր
Եւ ժողովեալ սրբոց գընդիցն մաղթանօր .
Բամից ժողովելոցս ի յանուն քո
Պարգեւեսցես շնորհաց բըղխումն եւ մաքրութեան :
Գոհաբանեմք ըզհայր յՈրդի եւ ի Հոգի
Եւ զերեսեանն ի մի Աստուած խոստովանիմք .
Սրբոց Երրորդութեանդ պատիւ եւ փառք
Այժմ եւ յաւէտ միշտ յաւիտեանս յաւիտենից :

Տաղիս տնադրուիքն կապեն Արքիեպիսկոպ Երգ Դեղաբարբի նոստարի Երգ . որուն ուրիշ մէկ տաղն այլ տեսանք այս թերթերուն մէջ :

Որդիակսն սէր .

Բայց Տէգուշ դեռ զհայրը անանկ վիճակի մէջ ցուցնելէն առաջ՝ որ զուարճակի կերպով որդւոյն ամբարտաւանութիւնը 'ի դերե կը հանէ , աւելի ծանր

և ազդոյ հանգամանաց մէջ զինքը կ'երեցնէ : Դիւֆիէրայ կոմսը կ'ուզէ ամենէն ծածկել աս ձախորդութիւն բերող հայրը որ իր պարծանքներն պարապը պիտի հանէր . ուզեր էր նաև նոյն իսկ իր ծառայէն ծածկել , զոր փութացեր էր արձկել , հօրը մտնելը տեսնելով և մեծարանաց համար է ըսելով ,

Ես յաչըս ծառայի ընդէր ըզհայր իմ ցուցից :

Բայց Լիկանդր անով չխաբուիր .

Քեզ երկիւղ է մանաւանդ ցուցանել զիմս հիքրութիւն .
Ահա այս պատճառք են քո , եւ խընդութեան փոխանակ՝
Տեսեալ զիս առ քեւ , հրպարտ ոգիդ 'ի վըրդով
Յերեսաց իմոց շիկնեալ՝ կայ 'ի վարան տալնապի .
Իւրումն ամբոխման հաղորդակից է սիրտ քո ,